

118. ԻՐԵՔ ԿԸՆԳԱ ԽԱՍՅԱԹԸ

Ժամանակով մի թաքավեր ա ըլում։ Տրան իրեք կընիկ ա ըլում։ Տրանցից ամեն մընին մի ուրիշ ջուռա խասյաթ ա ըլում. մինը՝ հայասրզ, մինը՝ կյող, մինն էլ՝ բող։ Էտ թաքավերը չի կարում տրանց հախիցը կյա։ Մտածում ա հինչ անի, ճար չի քրթանում։ Մի օր սա քյընում ա իրան հանդերը ման կյալի։ Քյընում ա տեսնում, վեր իրան ռանչպարներից մինը հա՛մ հանդի ծերումն ա պար կյալի, հա՛մ էլ՝ վռակալումը։

Ասված խոսք ա. վեր ամեն մարթ իրա դարդը լաց կըլի։ Էս թաքավերն էլ իրա դարդն ա միտքը քցում հու ուզում ա դիդալ, թա էս ռանչպարը հինչ ջուռա կնիկ ունի, վեր համ հանդի ծերումն ա պար կյալի, հա՛մ՝ վռակալումը։

Կյալիս ա տուն, դեվրիշի շորեր կենում, քյընում էտ ռանչպարի տունը։ Կնիկը տանն ա ըլում։ Թաքավերը սրան ասում ա «Ղոնաղ չե՞ք ընթունի»։ Կնիկը ասում ա. «Ղոնաղը աստծունն ա»։

Նստում ա, սպասում մինչև ռանչպարը կյալիս ա։ Սա, վեր տեսնում ա տանը ղոնաղ կա, կնգանը աչքով ա անում, վեր կործի կենա։

Էս կնգանը ցորեն հաց չի ըլում, ամմա ցորեն լեզու ա ըլում, վըեսկի էլ՝ ծեռքեր։ Քյընում ա ճուր ա պիրում, էս դեվրիշի վետներն ու ծեռքերը լվանում ա, հաց ա շինում, հաց տալիս, պատվով ճամփա քցում։

Թաքավերը կյալիս ա իրան պալատը, ըռավետը քշերով կան-

չում նազիր-վազիրին, հրամայում. «Քյընա՜, էս սհաթիս, էս ինչ ռանչպարին ու իրան կընգանը պեր իմ կուշտը»։

Նազիր-վազիրը քյընում ա ռանչպարի տունը, ասում, վեր թաքավերը քեզ ու քու կընգանը վռազ կանչում ա իրան կուշտ։

«Թաքավերը հո՞վ, ես՝ հով,— ասըմ ա ռանչպարը,— ա՛յ կընիկ, ըստեղ մի ըլամաթ կա։ Ինչ էլ վեր ըլի պտի քյընանք, թաքավերի հրաման ա»։

Էս ռանչպարը իրա կընգանը վեր ա ունում, նազիր-վազիրի հետ կյալիս կաղնում թաքավերի ըռաչին։

Թաքավերը ասում ա. «Ես իրեք կընիկ ունեմ, տուն՝ մինը, իմ իրեք կընիկը տալիս եմ բեզ, քու մինը ինձ պըտի տաս։ Տրա՜ հետ ես քեզ բլամա վեսկի կտամ, վեր տանես քըղհետի տներ շինես, քու կնանունց հետ մարթավարի ապրես»։

Ռանչպարը մի քիչ չեմ ու չում ա անում։ Պայց հի՞նչ պտի անի. վեր ա ունում թաքավերի իրեք կընգանը. ճամպա ընդնում, կյալիս հսնում մի կյետի։ Շորերը հանում ա, վեր իրան կնանունցը անցկցնի։ Ըռաչինը շլակում ա կյող կընգանը, կյալիս կաղնում կյետի մեչտեղը։

«Տու՜ հի՞նչ փշակի ես,— հարցնում ա ռանչպարը,— ասա՛, թա քըզանից խելքս պան կըտրեց՝ անց եմ կցնըլականա»։

«Ես կյող եմ»— ասում ա էտ կընիկը։

«Հա՞, վնաս չունի, կյողին էլ ճար ա ըլում»— ասում ա ռանչպարը։ Սրան թողում ա կյետի էն ըրեսին, հիմի էլ կյալիս, շլակում ա բոզ կընգանը։

Հենց վեր հըսնում ա կյետի մեչտեղը սրան էլ ա հըրցնում. «Տու՜ հի՞նչ փշակի ես»։

«Ես բոզ եմ, իմ փեշակը ղխպութունն ա»։

«Հա՞, վնաս չունի, քեզ էլ մի ճար կըլի»— ասում ա ռանչպարը, ու սրան էլ կյետը անցկըցնում։

Հիմի էլ հերթը հըսնում ա լզվանիկ կընգանը։

«Տու՜ հի՞նչ փշակի ես»— կյետի մեչտեղը հըրցնում ա ռանչպարը։

«Ես լզվանիկ կնիկ եմ՝ իսկական մկրատ, հինչ ասեմ՝ տու՜ պտի նհենց անես»։

«Հա՞,— ասում ա ռանչպարը,— դե վեր լզվանիկ ես, լիրփ ու հայասրզ, քեզ ճար չի ըլի»— ասում ա, հու էդ կընգյանը քցում կյետը։

Ճոպը տանում ա սրա բողազը, խեխտվում ա, ամմա իրա

խոսքից ետ չի տառնում։ Ճրից հանում ա էրկու մատը, նշանց տալիս, վեր ինքը մկրատ ա, իրան խոսքից ետ չի կաղնի։

«Աստված քեզ հետ»— ասում ա ռանչպարս, իրան էրկու կընդանը վեր ունում, կյալիս տուն։ Ըստեղ նա ուստաներին կանչում, փող ա տալիս, խնթրում, վեր սրանք իրա էրկու կընդա հետի էրկու առանձին օթախ սարքեն։ Կյողի համար նոր ընենց օթախ ա սարքել տալիս, վեր ամեն մի պատին մի պտրհան ըլի, իսկ բոզի հետի նհենց, վեր էրկու տուռ ըլի։

Կյողը մարթին հըրցնում ա. «Ա՛յ մարթ, էս. պտրհաննին հինչի՞ հետի ես սարքել»։

«Սարքել եմ, վեր հեփ կյողութուն անես, կյողացածտ մի պտրհանից էն մինը տանես, ես քո արածը չտեսնամ»։

Հիմի էլ բոզ կնիկն ա հրցնում. «Ա՛յ մարթ, էս էրկու տուռը հնչի՞ հետի էս սարքել»։ Մարթը պադասխանում ա.

«Սարքել եմ, վեր հեփ ուրիշ մարթ կյա քու կուշտը՝ մընով ընթունես, էն մընով ճամպա տընես, աչքս արածտ չըտեսնի»։

Էս կնանիքը էս մարթի խոսքերը լսելից ետը, որոշում են ճամպի կյալ։ Նրանցից մինը մարթի հետի ամեն օր ճաշ ա պադրաստում, տան թադարիք տեսնում։ Էն մինն էլ ամեն ըրուգու կաղնում ա մարթի ճամպեն յաշում, եղները հու անասունը տըղվարում, կյումը քիրում, մարթի վետները լվանում։

Էս ռանչպարս իրա կնանունց էս ըրարմունքը տըսնալով ավելի ա ըրխանում, ամեն օր քյընում ա հանդը, առաչներում թա հանդի մենակ ծերին հու վռակալին էր պար կյալիս, հիմի էլ մեջտեղն էլ ա պար կյալի։

Մի ըռավետ քշերավ թաքավերը տեղիցը վեր ա կենում, ինքը իրան ասում. «Քյնամ տեսնամ էն ռանչպարը հի՞նչ հալի յա»։ Կյալիս՝ ա հանդը, հեռվից յաշում, տեսնում, վեր ռանչպարի հալը թամուզ ուրիշ ա, տեսնում ա, վեր նա՝ թա առաչներում մենակ հանդի ծերին հու վռակալին էր պար կյալի, հիմի հանդի մեջտեղին էլ ա պար կյալի։

Թաքավերը մտածում ա, որոշում ըրուգունը քյընա տրա տուն։ Ըրուգունը դեվրիշի շորեր կեցին կյալիս, մտնում՝ ա ռանչպարի տուն։ Կնանիքը տանն են ըլում, ամմա թաքավերին ճանչում չեն։

«Ղոնաղ չեք ընթունի՞»— ասում ա նա։

«Ղոնաղը աստծունն ա»— պադասխանում՝ են ռանչպարի կնանիքը։

Հենց էտ թուշումը ռանչպարը կյալիս ա։ Էս դավրիշ-թաքավերը տեսնում ա, վեր էս կնանիքը տնից տուս են տառնում, մինը մարթի եզներն ու պաց թողնում, մինը մարթին ա զունլուղ անում։ Մի խոսքով ռանչպարիս վետը, կլուխը լվանում են, պիլում թախտին առոք-փառոք նստցնում։

Հաց ուտելի վախտը էս դավրիշ-թաքավերը ռանչպարին հրրցնում ա.— Ռանչպար ախպեր, լսելով քեզ իրեք կնիկ ա ըլել, հմի հինչի՞ ա էրկուսը։

Ռանչպարը կլիտի յա ընգնում, վեր սա թաքավերն ա. վախից ծվանը փորն ա հվաքվում։

«Թաքավերը ապրած կենա, քղանից հի՞նչ կյաղեմ,— ասում ա նա,— էն մի կնիկտ լղվանիկ-լաչառ էր, քցեցի կյետը, քշեց տարավ»։

Թաքավերը ասում ա. «Ռանչպար ախպեր, եկ տու քու կնիկը տար, իմ կնանիքը ինձ տուր»։

«Լավ ես ասում,— թաքավեր ջան,— ասում ա ռանչպարը, դրանից հի՞նչ տուս կըկյա, «ալգըմ գոզ, սաթտըմ գոզ, չախկա չուխկա նա էթտի»[1]։

Թաքավերը ասում ա. «Ա՛յ մարթ, տու էտ հի՞նչ ջուռա մարթ ես, վեր իմ բոզերին, կյաղերին տուն ես նստցրել»։ Ռանչպարը ասում ա. «Վեր իմ հարաքաթը չըլի, սրանց էլ բարաքաթը չի ըլի»։

---

1 Առա ընկույզ, վաճառոցի ընկույզ, կոտրատելն ի՞նչ հասավ (Ս. Ի.)։